**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

**2021թ նոյեմբերի** 18 **N** 515

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԻԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Դիան համայնքի ղեկավար Ռուդենկո Լազրևի Հմայակյանի 18.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 19-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դիան գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Ռուդենկո Լազրևի Հմայակյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 18 **N** 514

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԹՈՒԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Թաթուլ համայնքի ղեկավար Ալբերտ Կառլենի Հարոյանի 18.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 19-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թաթուլ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Ալբերտ Կառլենի Հարոյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

19.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401630236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 16 **N** 513

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Բյուրական համայնքի բնակիչ Սպարտակ Աշոտի Ռուստամյանի 16.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 16-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրական գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Սպարտակ Աշոտի Ռուստամյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11/17/2021

X

ՏԻԳՐԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Подписано: YEGHIAZARYAN TIGRAN 2801920380

**/Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ. նոյեմբերի** 16 **N** 512

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՌԱԴԻԿ ՆՈՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Բյուրական գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ռադիկ Նորիկի Գևորգյանի 16.11.2021թ. դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 16-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրական գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ռադիկ Նորիկի Գևորգյանի լիազորությունները դադարեցնել:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11/17/2021

X

ՏԻԳՐԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Подписано: YEGHIAZARYAN TIGRAN 2801920380

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 նոյեմբերի 2021 թվական N 511

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածո նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 21 քաղաքացիներ հատկացնել 830 000 /ութ հարյուր երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայ հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավո ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՄՏԶ վարչության հաշվապահական հաշվառման բաժնի օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Ռ. Պետրոսյա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 510 10 նոյեմբերի 2021թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱՐՏԵՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N16 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Արտենիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 158 գրությունը, որոշում եմ.

1. Հաստատել՝
   «Արտենիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի՝

1.1. Ֆինանսական գործունեության ճշտված նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

1.2. Ճշտված հաստիքացուցակը՝ համաձայն N2 հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2021 թվականի փետրվարի 13-ի N16 որոշումը:

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2021թ. Նոյեմբերի 10-ի N 510 որոշման

# ՃՇՏՎԱԾ ՆԱԽԱՀԱՇԻՎ
## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՏԵՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

**2021 ԹՎԱԿԱՆ**

հազ.դրամ

| | Հոդվածի անվանումը | Հոդված | I եռամսյակ | կիսամյակ | 9 ամիս | տարեկան |
|---|---|---|---|---|---|---|
| I | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝ | | 11559.5 | 20221.9 | 28984.4 | 39546.9 |
| 1.1 | Դրամական ազատ մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին | | **1585.0** | **1585.0** | **1585.0** | **1585.0** |
| 1.2 | ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | 9974.5 | 18636.9 | 27399.4 | 37961.9 |
| 1,2,1 | Պետական պատվերի շրջանակներում մատուցած ծառայություններից, որից | | 9874.5 | 18336.9 | 26799.4 | 34561.9 |
| 1.2.1.1 | հիվանդանոցային | | | | | |
| 1.2.1. | արտահիվանդանոցային | | | | | |
| 1,2,2 | Վճարովի ծառայություններից | | | | | |
| 1.3 | Այլ եկամուտներից, որից՝ | | 100.0 | 300.0 | 600.0 | 3200.0 |
| | Համայնքապետարան | | | | | 200.0 |
| | | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | | | |
| II | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | **11559.5** | **20221.9** | **28984.4** | **39546.9** |
| ա) | ընթացիկ, այդ թվում՝ | | **11559.5** | **20221.9** | **28984.4** | **39546.9** |
| 1 | **Աշխատավարձի և հավելավճարների գծով, որից՝** | **4110** | **8586.5** | **15541.9** | **22509.4** | **31013.5** |
| 1.1 | Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների գծով | 4111 | 8586.5 | 15341.9 | 22209.4 | 27863.5 |
| 1.2 | պարգևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների գծով | 4112 | | 200.0 | 300.0 | 3150.0 |
| 2 | **Շարունակական ծախսերի գծով, որից՝** | **4210** | **400.0** | **650.0** | **750.0** | **1531.3** |
| 2.1 | գործառնական և բանկային ծառայությունների ծախսերի գծով | 4211 | | | | |
| 2.2 | էներգետիկ ծառայությունների գծով | 4212 | 370.0 | 560.0 | 630.0 | 1339.3 |
| 2.3 | կոմունալ ծառայությունների գծով | 4213 | | | | 12.0 |
| 2.4 | կապի ծառայությունների գծով | 4214 | 30.0 | 90.0 | 120.0 | 180.0 |
| 2.5 | վարչական ծառայությունների գծով | 4215 | | | | |
| 2.6 | գույքի և սարքավորումների վարձակալության գծով | 4216 | | | | |
| 3 | **Գործուղումների և շրջագայությունների ծախսերի գծով, որից՝** | **4220** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** |
| 3.1 | Ներքին գործուղումների գծով | 4221 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | **Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման գծով, որից՝** | **4230** | **25.0** | **50.0** | **60.0** | **125.0** |
| 4.1 | վարչական ծառայությունների գծով | 4231 | | | | |
| 4.2 | համակարգչային ծառայությունների գծով | 4232 | 25.0 | 50.0 | 60.0 | 100.0 |
| 4.3 | աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով | 4233 | | | | |
| 4.4 | տեղեկատվական ծառայությունների գծով | 4234 | | | | 25.0 |
| 4.5 | կենցաղային և հանրային սննդի ծառայությունների գծով | 4236 | | | | |
| 4.6 | ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով | 4239 | | | | |
| 5 | **Այլ մասնագիտական ծառայությունների գծով, որից՝** | **4240** | **906.0** | **1450.0** | **2080.0** | **2204.3** |
| 5.1 | Գնումների համակարգողի ծառայության գծով | 4241 | | | | |
| 5,1,1 | Գնումների համակարգողի ծառայության գծով | 4241 | | | | |
| 5,1,2 | Գույքագրման և վերագնահատման գծով | | | | | |
| 5,1,3 | մասնագիտական ծառայություն | 4241 | 906.0 | 1450.0 | 2080.0 | 2204.3 |
| 5,1,4 | | | | | | |
| 6 | **Ընթացիկ նորոգման և պահպանման գծով, որից** | **4250** | **100.0** | **150.0** | **150.0** | **398.0** |
| 6.1 | շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | | | | |
| 6.2 | մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 100.0 | 150.0 | 150.0 | 398.0 |
| 6.3 | | | | | | |
| 7 | **Նյութերի /ապրանքներ/ ձեռքբերման գծով, որից** | **4260** | **750.0** | **1460.0** | **2430.0** | **3049.0** |
| 7.1 | գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 80.0 | 150.0 | 180.0 | 270.0 |
| 7.2 | գյուղատնտեսական ապրանքներ | 4262 | | | | |
| 7.3 | վերապատրաստման և ուսուցման նյութեր (աշխատողների ղարգացման) | 4263 | | | | |
| 7.4 | առողջապահական և լաբորատոր նյութեր | 4266 | 400.0 | 900.0 | 1500.0 | 1779.0 |
| 7.5 | կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | | | | |
| 7.6 | հատուկ նպատակային այլ նյութեր (վառելանյութ) | 4269 | 270.0 | 410.0 | 550.0 | 1000.0 |
| 8 | **Հարկերի, պարտադիր վճարների և տույժերի գծով, որից՝** | **4820** | **65.0** | **120.0** | **185.0** | **270.0** |
| 8.1 | շահութահարկի գծով | 4822 | | | | |
| 8.2 | ԱԱՀ-ի գծով | 4822 | 15.0 | 20.0 | 35.0 | 55.0 |
| 8.3 | չփոխհատուցվող հարկերի գծով | 4822 | | | | |
| 8.4 | Պարտադիր վճարների գծով | 4824 | 50.0 | 100.0 | 150.0 | 215.0 |
| 9 | **Կրեդիտորական պարտքի մարման գծով** | | | | | |
| 10 | **Այլ ծախսերի գծով** | **4861** | **124.0** | **200.0** | **220.0** | **245.0** |
| **բ)** | **Ոչ ֆինանսական ակտիվների գծով, այդ թվում՝** | **5000** | **600.0** | **600.0** | **800.0** | **850.0** |
| 1 | **Մեքենաներ և սարքավորումների ձեռք բերման գծով, այդ թվում՝** | **5120** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** |
| 1.1 | Այլ վարչական գույք և սարքավորումներ | 5122 | | | | |
| 1.2 | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | | | | |
| 1.3 | | | | | | |
| 1.4 | | | | | | |
| 2 | **Շենքերի և շինությունների ձեռքբերում** | 5111 | | | | |
| 3 | **Շենքերի և շինությունների կառուցում( գազաֆիկացում)** | 5112 | **600.0** | **600.0** | **800.0** | **850.0** |
| 4 | **Շենքերի և շինությունների հիմնական վերանորոգում** | 5113 | | | | |
| 5 | **Ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերում** | 5132 | | | | |
| 6 | | | | | | |
| 7 | **Նախագծահետազոտական ծախսերի գծով** | 5134 | | | | |
| **III** | **Դրամական միջոցների ազատ մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | | **1585.0** | **1585.0** | **1585.0** | **1585.0** |

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

2021թ. նոյեմբերի 10-ին, N 509

ք.Աշտարակ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՍԱԴՈՒՆՑԻ Ս. ՄՈՒՐԱԴՈՎԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԳՐԻՇԱ ՌԱԶԳՈԵՎԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սադունցի Ս. Մուրադովի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անուշ Ջանոյանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի N AF 16538 անաշխատունակության թերթիկը և 2021 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը՝ *որոշում եմ.*

2021 թվականի նոյեմբերի 10-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սադունցի Ս. Մուրադովի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել տվյալ դպրոցի ուսուցիչ Գրիշա Ռազգոևի վրա՝ մինչև հիմքի վերացումը:

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

2021թ. նոյեմբերի 10 N 508

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 22-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ն մասով, ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2008 թվականի ապրիլի 1-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> N 22-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածում <<Դ.Գևորգյան>> բառերը փոխարինել <<Ռ.Պետրոսյան>> բառերով:

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
ՈՐՈՇՈՒՄ

**2021թ. նոյեմբերի** 10 **-ին, N**507
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՎՐՈՒՅՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ ԻՐ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածի դրույթներով, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, Վ. Բարխուդարյանի 2021 թվականի նոյեմբերի 8-ի դիմումը՝ *որոշում եմ* .

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական Վրույր Բարխուդարյանին տրամադրել իր ամենամյա նվազագույն արձակուրդի մասը 2021 թվականի հունվարի 21-ից 2022 թվականի հունվարի 21-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 10 աշխատանքային օր տևողությամբ 2021 թվականի նոյեմբերի 10-ից նոյեմբերի 23-ը ներառյալ:

Ի.ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. նոյեմբերի 9 -ին, N 504
ք. Աշտարակ

**ԶԱԼԻԲԵԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԼԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թլիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2021 թվականի նոյեմբերի 1-ին անցկացված մրցույթի արդյունքները և Զ.Ղազարյանի 2021 թվականի նոյեմբերի 3-ի անձնական դիմումը՝ *որոշում եմ.*

Զալիբեկ Սարիբեկի Ղազարյանին 2021 թվականի նոյեմբերի 8-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թլիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

N 502 09 նոյեմբերի 2021թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ COVID-19 ՎԵՐԱՊՐՈՖԻԼԱՎՈՐՎԱԾ «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 24-ի No 3200 - Լ հրամանը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ՎԳ//23311-2021 2021 թվականի հոկտեբերի 28-ի գրությունը, «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի նոյեմբերի 01-ի գրությունը, որոշում եմ.

1. Հաստատել COVID-19 վերապրոֆիլավորված «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ճշտված բիաստիքացուցակը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 9-ից ծագած հարաբերությունների վրա:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 13-ի N308 որոշումը:

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի

2021թ. նոյեմբերի 9-ի N 502 որոշման

## ՃՇՏՎԱԾ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

**COVID-19 վերապրոֆիլավորված «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի**

| Հ/Հ | Ստորաբաժանման անվանումը | Հաստիքների քանակ | COVID-19 վերապրոֆիլավորման հետ կապված հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ | Մեկ դրույքի գումարը | Ընդհանուր վարձատրության չափ |
|---|---|---|---|---|---|
| | Ստորաբաժանման անվանումը | | | | |
| **1, Վարչակառավարման անձնակազմ** | | | | | |
| 1.1 | Տնօրեն | 1 | 1,385,000 | 1,385,000 | 1,385,000 |
| 1.2 | Տնօրենի տեղակալ բուժ.գծով | 1 | 850,000 | 850,000 | 850,000 |
| 1.3 | Գլխավոր բուժքույր | 1 | 480,000 | 480,000 | 480,000 |
| **ՆԴԱՄԵՆԸ** | | **3** | **2,715,000** | | **2,715,000** |
| **ԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ** | | | | | |
| **2.1** | Գլխավոր հաշվապահ | 1 | 280,000 | 280,000 | 280,000 |
| **2.2** | Կադրերի տեսուչ | 1 | 180,000 | 180,000 | 180,000 |
| 2.3 | Հաշվապահ | 1 | 180,000 | 180,000 | 180,000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3** | **640,000** | | **640,000** |
| | **3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ** | | | | |
| 3.1 | Տնտեսվար | 1 | 280,000 | 280,000 | 280,000 |
| 3.2 | Էլեկտրիկ | 1 | 135,000 | 135,000 | 135,000 |
| 3.3 | Հյուսն | 1 | 135,000 | 135,000 | 135,000 |
| 3.4 | Հնոցապահ | 1 | 135,000 | 135,000 | 135,000 |
| 3.5 | Բանվոր | 6 | 1,370,000 | 228,333 | 1,370,000 |
| 3.6 | Լվացարար | 1 | 90,000 | 90,000 | 90,000 |
| 3.7 | Հերթապահ սանիտար | 3 | 816,250 | 272,083 | 816,250 |
| 3.8 | Քույր տնտեսուհի | 1 | 135,000 | 135,000 | 135,000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **15** | **3,096,250** | | **3,096,250** |
| | **4.ԲԺՇԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ** | | | | |
| 4.1 | Վիճակագիր | 2 | 201,350 | 100,675 | 201,350 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **2** | **201,350** | | **201,350** |
| | **5.ԴԵՂԱՏՈՒՆ** | | | | |
| 5.1 | Դեղատան Վարիչ | 1 | 350,000 | 350,000 | 350,000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1** | **350,000** | | **350,000** |
| | **6, Ինֆեկցիոն բաժանմունք 1** | | | | |
| 6.1 | Բաժանմունքի վարիչ | 1 | 805,370 | 805,370 | 805,370 |
| 6.2 | Ցերեկային բժիշկ | 1 | 469,800 | 469,800 | 469,800 |
| 6.3 | Հերթապահ բժիշկ-պատասխանատու | 3 | 1,632,480 | 544,160 | 1,632,480 |
| 6.4 | Ավագ բուժքույր | 1 | 335,600 | 335,600 | 335,600 |
| 6.5 | Հերթապահ բուժքույր | 6 | 1,632,500 | 272,083 | 1,632,500 |
| 6.6 | Հերթապահ մայրապետ | 6 | 1,224,208 | 204,035 | 1,224,208 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ Ինֆեկցիոն բաժին 1** | **18** | **6,099,958** | | **6,099,958** |
| | **7. Ինֆեկցիոն բաժանմունք 2** | | | | |
| 7.1 | Բաժանմունքի վարիչ | 1 | 805,370 | 805,370 | 805,370 |
| 7.2 | Ցերեկային բժիշկ | 1 | 469,800 | 469,800 | 469,800 |
| 7.3 | Հերթապահ բժիշկ-պատասխանատու | 3 | 1,632,480 | 544,160 | 1,632,480 |
| 7.4 | Ավագ բուժքույր | 1 | 335,600 | 335,600 | 335,600 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7.5 | Հերթապահ բուժքույր | 6 | 1,632,500 | 272,083 | 1,632,500 |
| 7.6 | Հերթապահ մայրապետ | 6 | 1,224,208 | 204,035 | 1,224,208 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ Ինֆեկցիոն բաժին 2** | **18** | **6,099,958** | | **6,099,958** |
| | **8. Ինֆեկցիոն բաժանմունք 3** | | | | |
| 8.1 | Բաժանմունքի վարիչ | 1 | 805,370 | 805,370 | 805,370 |
| 8.2 | Ցերեկային բժիշկ | 1 | 469,800 | 469,800 | 469,800 |
| 8.3 | Հերթապահ բժիշկ-պատասխանատու | 3 | 1,632,480 | 544,160 | 1,632,480 |
| 8.4 | Ավագ բուժքույր | 1 | 335,600 | 335,600 | 335,600 |
| 8.5 | Հերթապահ բուժքույր | 6 | 1,632,500 | 272,083 | 1,632,500 |
| 8.6 | Հերթապահ մայրապետ | 6 | 1,224,208 | 204,035 | 1,224,208 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ Ինֆեկցիոն բաժին 3** | **18** | **6,099,958** | | **6,099,958** |
| | **9. Վերակենդանացման բաժանմունք 1** | | | | |
| 9.1 | Բաժանմունքի վարիչ | 1 | 805,370 | 805,370 | 805,370 |
| 9.2 | Հերթապահ բժիշկ-պատասխանատու | 6 | 8,161,200 | 1,360,200 | 8,161,200 |
| 9.3 | Ավագ բուժքույր | 1 | 335,600 | 335,600 | 335,600 |
| 9.4 | Հերթապահ բուժքույր | 6 | 2,448,500 | 408,083 | 2,448,500 |
| 9.5 | Հերթապահ մայրապետ | 6 | 1,632,500 | 272,083 | 1,632,500 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ վերակենդանացման բաժանմունք 1** | **20** | **13,383,170** | | **13,383,170** |
| | **10. Վերակենդանացման բաժանմունք 2** | | | | |
| 10.1 | Բաժանմունքի վարիչ | 1 | 805,370 | 805,370 | 805,370 |
| 10.2 | Հերթապահ բժիշկ-պատասխանատու | 6 | 8,161,200 | 1,360,200 | 8,161,200 |
| 10.3 | Ավագ բուժքույր | 1 | 335,600 | 335,600 | 335,600 |
| 10.4 | Հերթապահ բուժքույր | 6 | 2,448,500 | 408,083 | 2,448,500 |
| 10.5 | Հերթապահ մայրապետ | 6 | 1,632,500 | 272,083 | 1,632,500 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ վերակենդանացման բաժանմունք 2** | **20** | **13,383,170** | | **13,383,170** |
| | **12. Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ բաժին** | | | | |
| 12.1 | Էնդոկրին կոսուլտացիա COVID 19 | 1 | 180,000 | 180,000 | 180,000 |
| 12.2 | կարդիոլոգի կոնսուլտացիա COVID-19 | 1 | 200,000 | 200,000 | 200,000 |
| 12.3 | Վիրաբույժի կոնսուլտացիա COVID-19 | 1 | 150,000 | 150,000 | 150,000 |
| 12.4 | Նյարդաբանի կոնսուլտացիա COVID-19 | 1 | 200,000 | 200,000 | 200,000 |
| 12.5 | Անոթային վիրաբույժի կոնսուլտացիա COVID-19 | 1 | 150,000 | 150,000 | 150,000 |
| 12.6 | Նմուշառող բուժքույր COVID-19 | 1 | 250,000 | 250,000 | 250,000 |
| 12.5 | Լաբորատորիայի վարիչ* | 1 | 155,000 | 155,000 | 155,000 |
| 12.6 | Սոնոգրաֆիստ | 1 | 250,000 | 250,000 | 250,000 |
| 12.7 | Կարդիո-էխո | 1 | 200,000 | 200,000 | 200,000 |
| 12.8 | Ռենտգենոլոգ | 1 | 200,000 | 200,000 | 200,000 |
| 12.9 | Ֆլյուրոգրաֆիկ կաբինետի բժիշկ | 1 | 200,000 | 200,000 | 200,000 |
| 12.10 | Լաբորատորիայի բուժքույր | 4 | 1,559,000 | 389,750 | 1,559,000 |
| 12.11 | Սոնոգրաֆիայի բուժքույր | 0.5 | 70,000 | 140,000 | 70,000 |
| 12.12 | Ֆլյուրոգրաֆիկ կաբինետի բուժքույր | 1 | 95,000 | 95,000 | 95,000 |
| 12.13 | Ռենտգեն լաբորանտ | 1 | 95,000 | 95,000 | 95,000 |
| 12.14 | Լաբորատորիայի մաքրուհի | 0.5 | 80,000 | 160,000 | 80,000 |
| 12.15 | Մաքրուհի | 1 | 140,000 | 140,000 | 140,000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **19** | **4,174,000** | | **4,174,000** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | |
| | **Ընդամենը աշխատավարձ** | **137** | **56,242,814** | | **56,242,814** |

***-Բժիշկ լաբորանտ հերթապահությունների և արտաժամյա աշխ, համար 1-ժամը 1550 դրամ**

*Գործում է 2021թ. հոկտեմբերի 9-ից*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 5 **N** 501

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Բյուրական համայնքի բնակիչ Ռադիկ Նորիկի Գևորգյանի 05.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 5-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրական գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Ռադիկ Նորիկի Գևորգյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2021 թվական N 500

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 15 քաղաքացիների հատկացնել 710000/ յոթ հարյուր տասը հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՏՏՀ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Ռ. Պետրոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---

**2021թ նոյեմբերի 3** **N 499**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Զովասար համայնքի բնակիչ Կիրակոս Պողոսի Պողոսյանի 03.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Զովասար գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Կիրակոս Պողոսի Պողոսյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 3 **N** 498

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՍՈՒՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Սասունիկ համայնքի բնակիչ Արման Մարտիկի Մարգարյանի 03.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Արման Մարտիկի Մարգարյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

---

**2021թ. նոյեմբերի** 3 **N** 497

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՑԱՄԱՔԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Ցամաքասար համայնքի բնակիչ Գոռ Գարեգինի Գրիգորյանի 03.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ցամաքասար գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Գոռ Գարեգինի Գրիգորյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 3 **N** 496

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՐՏԻԶԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Պարտիզակ համայնքի բնակիչ Հայկ Անդրանիկի Տերոյանի 02.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Պարտիզակ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Հայկ Անդրանիկի Տերոյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ. նոյեմբերի** 3 **N** 495

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵԹԱՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Ոսկեթաս համայնքի բնակիչ Սամվել Սերոժի Հովսեփյանի 01.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեթաս գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Սամվել Սերոժի Հովսեփյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

---

**2021թ. նոյեմբերի 3** **N 494**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Ներքին Սասնաշեն համայնքի բնակիչ Անդրանիկ Գեղազնիկի Շամոյանի 03.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Անդրանիկ Գեղազնիկի Շամոյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2021թ. նոյեմբերի 3** **N 493**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Կաթնաղբյուր համայնքի բնակիչ Աշոտ Մկրտիչի Հովհաննիսյանի 03.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Աշոտ Մկրտիչի Հովհաննիսյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

**2021թ նոյեմբերի** 3 **N** 492

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Փարպի համայնքի բնակիչ Իշխան Բազմասերի Առաքելյանի 02.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Իշխան Բազմասերի Առաքելյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 3 **N** 491

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Ագարակավան համայնքի բնակիչ Խորեն Խորենի Կիրակոսյանի 02.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ագարակավան գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Խորեն Խորենի Կիրակոսյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

---

**2021թ նոյեմբերի 3** **N 490**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Արագածոտն համայնքի բնակիչ Մելսիկ Արշակի Ղազարյանի 02.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Մելսիկ Արշակի Ղազարյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2021թ նոյեմբերի** 3 — **N** 489

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵԴԵՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Նոր Եդեսիա համայնքի բնակիչ Վահան Ղազարոսի Աբգարյանի 02.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 3-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Եդեսիա գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Վահան Ղազարոսի Աբգարյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2021թ նոյեմբերի** 1 **N** 488

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԼԻՔԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Մելիքգյուղ համայնքի բնակիչ Դերենիկ Վանուշի Շահբազյանի 01.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 2-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Դերենիկ Վանուշի Շահբազյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

**2021թ. նոյեմբերի** 1 **N** 487

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԼԻՔԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄՀԵՐԻԿ ՎԱԶԳԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Մելիքգյուղ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար Միհրիկ Մխիթարյանի 01.11.2021թ. դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար Միհրիկ Մխիթարյանի լիազորությունները դադարեցնել:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի 1** **N 486**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՐՈՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Լեռնարոտ համայնքի բնակիչ Խաչիկ Ադամի Մելքոնյանի 01.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Լեռնարոտ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Խաչիկ Ադամի Մելքոնյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. նոյեմբերի 30-ին, N 540
ք. Աշտարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՑԱՄԱՔԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Ա.Ստեփանյանի 2021 թվականի նոյեմբերի 30-ի դիմումը՝ *որոշում եմ.*

2021 թվականի նոյեմբերի 30-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ցամաքասարի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները դնել դպրոցի դասվար Արմենուհի Ստեփանյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

Պարտականությունը կատարող՝ Հ.ԳՈՒԼՅԱՆ

02.12.2021

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. նոյեմբերի 30 -ին, N 539
ք. Աշտարակ

ՆԱԶԻԿ ՆԻԿՈԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ Գ.ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2021 թվականի նոյեմբերի 25-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ն.Նիկոլյանի 2021 թվականի նոյեմբերի 29-ի անձնական դիմումը՝ *որոշում եմ.*

Նազիկ Վարանցովի Նիկոլյանի 2021 թվականի դեկտեմբերի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2021 թվականի հոկտեմբերի 15-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Պարտականությունները կատարող՝ Հ.ԳՈՒԼՅԱՆ

X
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբեր 2021թվականի N 538

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1908 -Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄԵՄ՝

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության տակ գործող կրթության բնագավառի պետական ոչ առևտրային կազմակերպությունների բյուջեների վերաբաշխումը համաձայն հավելվածի:

30.11.2021

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391

պարտականությունները կատարող՝ Հ. ԳՈՒԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**2021թ. նոյեմբերի 29 -ին, N 536**
**ք. Աշտարակ**

ՆԱԶԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՑԱՄԱՔԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի նոյեմբերի 29-ից Նազիկ Պատվականի Մարկոսյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ցամաքասարի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի նոյեմբերի 29-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

30.11.2021

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԼՅԱՆ

Подписано: GULYAN HARUTYUN 3102850391

Պարտականությունները կատարող՝ Հ.ԳՈՒԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ. նոյեմբերի 29 -ին, N 535**
**ք.Աշտարակ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՄԵԼԻՔԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի երկրորդ մասի <<դ>> ենթակետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1535-Ն և 2021 թվականի փետրվարի 11-ի N 166-Ն որոշումների պահանջների.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 195-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Մելիքգյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

**1) 125-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.**

<<125. Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի <<Պետական գույքի վարձակալության տրամադրման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N731, 2001 թվականի փետրվարի 22-ի N125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:>>.

**2) 125-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 125.1-ին կետով՝**

<<125.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես դպրոցին իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան դպրոցին փոխանցելու համար:>>:

**3) 41-րդ կետում <<առնվազն վեց անդամ>> բառերը փոխարինել <<առնվազն երկու երրորդը>> բառերով.**

**4) 42-րդ կետում <<փակ>> բառը փոխարինել <<բաց>> բառով.**

**5) 43-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43.1-ին կետով.**

<<43.1. Տնօրենի ընտրության ժամանակ սույն կանոնադրության 80-րդ կետի 1.1-ին ենթակետում և 102-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված քվեարկության արդյունքները պարտադիր են մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից առաջադրված դպրոցի խորհրդի անդամների համար: Ծնողական և մանկավարժական խորհուրդների՝ կառավարման խորհրդում առաջադրած անդամները, խորհուրդների կողմից քվեարկության արդյունքում ձայների հավասարությամբ պայմանավորված՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար տվյալ մրցույթի ժամանակ թեկնածու չառաջադրելու դեպքում, ազատ են իրենց քվեարկության ժամանակ:>>.

**6) 79-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.**

<<1.1) դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը.>>.

**7) 80-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.**

<<1.1) քվեարկության միջոցով, դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդին հավանություն տալու,>>.

**8) 102-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին ենթակետով.**

<<1.1) քննարկում է դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը և քվեարկությամբ որոշում դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի իր թեկնածուին.>>:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզպետի 2021թ. հոկտեմբերի 6-ի N 372 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN-RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ու Մ

**2021թ նոյեմբերի** 29

**N** 534

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Ծաղկասար համայնքի բնակիչ Հովհաննես Կորյունի Աբաջյանի 26.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 29-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկասար գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Հովհաննես Կորյունի Աբաջյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

29.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---

**2021թ նոյեմբերի** **N** 533

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Սորիկ համայնքի բնակիչ Վազիր Թեմուրի Բաքոյանի 24.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 25-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սորիկ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Վազիր Թեմուրի Բաքոյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

25.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ նոյեմբերի** 25 **N** 532

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՍԱՍՈՒՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Վերին Սասունիկ համայնքի բնակիչ Սամվել Կարապետի Բաղդասարյանի 24.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 25-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վերին Սասունիկ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Սամվել Կարապետի Բաղդասարյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

25.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 24 **N** 531

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՆՉ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Կանչ համայնքի բնակիչ Մրազ Աֆոյի Բշարյանի 22.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 24-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կանչ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Մրազ Աֆոյի Բշարյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. նոյեմբերի 24 -ին, N 530
ք. Աշտարակ

# ՆԱՌԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԳԵՏԱՓԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Գետափի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2021 թվականի նոյեմբերի 22-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ն. Հովհաննիսյանի 2021 թվականի նոյեմբերի 23-ի անձնական դիմումը՝ *որոշում եմ.*

Նառա Վլադիկի Հովհաննիսյանին 2021 թվականի նոյեմբերի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Գետափի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

24.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. նոյեմբերի 24 -ին, N 529
ք. Աշտարակ

# ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՊԱՐԱՆԻ Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի Վ. Եղիազարյանի անվան հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2021 թվականի նոյեմբերի 19-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ա. Ալեքսանյանի 2021 թվականի նոյեմբերի 22-ի անձնական դիմումը՝ *որոշում եմ.*

Արսեն Դրաստամատի Ալեքսանյանին 2021 թվականի նոյեմբերի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ապարանի Վ. Եղիազարյանի անվան հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

24.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ նոյեմբերի** 22 **N** 528

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 3.1 կետով և հիմք ընդունելով Ղազարավան համայնքի բնակիչ Արտակ Նվերի Սարգսյանի 19.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 22-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ղազարավան գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Արտակ Նվերի Սարգսյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

22.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 22 **N** 527

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 3.1 կետով և հիմք ընդունելով Անտառուտ համայնքի բնակիչ Աղվան Սուրենի Սահակյանի 19.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 22-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Անտառուտ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Աղվան Սուրենի Սահակյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

22.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

նոյեմբերի 22 2021 թվական N 526

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 18 քաղաքացիների հատկացնել 710 000 /յոթ հարյուր տասը հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՈՒՏԶ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

25.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. Պետրոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2021թ. նոյեմբերի 19 N 525

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշումը և Հ.Գևորգյանի 2021 թվականի նոյեմբերի 18 -ի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի Գլխավոր քարտուղար Հրաչյա Գևորգյանին տրամադրել իր ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2020 թվականի նոյեմբերի 25-ից 2021 թվականի նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 5 աշխատանքային օր տևողությամբ 2021 թվականի նոյեմբերի 22-ից նոյեմբերի 26-ը ներառյալ:

2.Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

19.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021 թ.նոյեմբերի 18 N - 524

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 81 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2019 թվականի հունիսի 7-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը կազմող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2001 թվականի սեպտեմբերի 12-ի N 128 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 81 կարգադրությամբ հաստատված հավելվածի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Դ. Գևորգյան>> բառերը փոխարինել << Ռ. Պետրոսյան>> բառերով:

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. նոյեմբերի 18 -ին, N 523
ք. Աշտարակ

ՆԵԼԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կարինի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2021 թվականի նոյեմբերի 12-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ն. Ղարիբյանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի անձնական դիմումը՝ *որոշում եմ.*

Նելի Գասպարի Ղարիբյանին 2021 թվականի նոյեմբերի 18-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կարինի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2021թ. նոյեմբերի 18-ին, N 522**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կանիաշիրի հիմնական և Վարդաբլուրի միջնակարգ դպրոցների կառավարման միացյալ խորհրդի անդամ Գ. Մկրտչյանի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Արագածի տարածաշրջանի 6-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Մկրտչյան Գրիգոր Այսերի>> բառերը փոխարինել <<Մարտիրոսյան Քնարիկ Հրայրի>> բառերով:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ. նոյեմբերի 18-ին, N 521**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ագարակի և Ոսկեհատի միջնակարգ դպրոցների կառավարման միացյալ խորհրդի անդամ Գ. Մկրտչյանի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 4-րդ միացյալ խորհրդում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Մկրտչյան Գրիգոր Այսերի>> բառերը փոխարինել <<Սիմոնյան Արմինե Վահագի>> բառերով:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ճ-ռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2021թ. նոյեմբերի 18-ին, N 520**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կարինի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի անդամ Գ. Մկրտչյանի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի <<Առանձին խորհուրդներ>> բաժնի 8-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Մկրտչյան Գրիգոր Այսերի>> բառերը փոխարինել <<Ավոյան Սաթենիկ Մամիկոնի>> բառերով:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ նոյեմբերի** 18 **N** 519

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇՂԱՐՇԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Շղարշիկ համայնքի բնակիչ Արևշատ Սեդրակի Հակոբյանի 18.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 19-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շղարշիկ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Արևշատ Սեդրակի Հակոբյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 18 **N**518

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Օշական համայնքի ղեկավար Արամ Գուրգենի Ներսիսյանի 18.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 19-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Արամ Գուրգենի Ներսիսյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ...

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

---

**2021թ նոյեմբերի** 18 **N** 517

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ղեկավար Գարեգին Արմենակի Սարգսյանի 18.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 19-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Գարեգին Արմենակի Սարգսյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2021թ նոյեմբերի** 18 **N** 516

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով և հիմք ընդունելով Ոսկեվազ համայնքի ղեկավար Հայկ Պարգևի Հովհաննիսյանի 18.11.2021 թվականի դիմումը **որոշում եմ.**

1. 2021 թվականի նոյեմբերի 19-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակել Հայկ Պարգևի Հովհաննիսյանին՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր լիազորությունների պաշտոնական ստանձնումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18.11.2021

X

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN RAZMIK 3401610236

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**